ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՄՈՒՍԱՀԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 28-ի №320Ա որոշմամբ «ՄՈՒՍԱՀԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Ախուրյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0657 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0657 լիցենզիա) պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 29-ը, Ընկերությունը հանձնաժողով չի ներկայացրել օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած «Ախուրյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ),

բ. Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 5-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ իր 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Ընկերության ԼԷ №0657 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի քննարկման նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի №ԳԲ/34.3-Մ2-12/3022-2022 գրությամբ,

գ. Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2022 թվականի սեպտեմբերի 9-ի №033 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Նախագիծը,

դ. Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.
2) 2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
3) 3) նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է.

ե. իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0657 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև սույն թվականի օգոստոսի 29-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, ինչի հետևանքը Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0657 լիցենզիայի գործողության կասեցումն է: Մինչդեռ մինչև ԼԷ №0657 լիցենզիայի գործողության կասեցման մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը Ընկերությունը ներկայացրել է Նախագիծը, ինչով պայմանավորված, ըստ էության վերացել է համապատասխան վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել ԼԷ №0657 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի քննարկման նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 5-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.